«Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆ ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԳՐՈՂ ՓԻԹԵՐ ԲԱԼԱՔՅԱՆԻՆ

Սեպտեմբերի 4-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշան հանձնեց ամերիկահայ գրող Փիթեր Բալաքյանին:

Վեհափառ Հայրապետն իր խոսքում բարձր գնահատեց նրա ստեղծագործական վաստակը՝ մաղթելով բեղուն գրիչ ու արդյունավոր օրեր:

«Պատահական չէ, որ Փիթեր Բալաքյանը երկու գրքեր՝ «Ճակատագրի սև շունը» և «Այրվող Տիգրիսը», նվիրել է Հայոց ցեղասպանությանը: Կարծես թե իր նախնիների ոգու կանչն է փոխանցվել իրեն և արձագանքել իր հոգում և գրչի տակ արդյունքի վերածվել այդ գրքերի մարմնավորումով: ...Այս պահին երկնքից օրհնություն է իջնում այս հարկի ներքո Ձեր ծառայության և աշխատանքների համար, որոնք մեկ անգամ ևս հարգանք, աղոթք են մատուցում մեր բյուրավոր զոհերի հիշատակին»,- նշեց Նորին Սրբությունը:

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի միաբաններ, ՀՀ գրողների միության նախագահ Լևոն Անանյանը, ՀԲԸՄ-ի հայաստանյան գրասենյակի տնօրեն Աշոտ Ղազարյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԵՂԵՌԱՄԱ ԴԵՊԻ ԱՂՈՒՆՔԻ ՓԱՌՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՄԷՏԱՅԻ ԿՈՄԷՏԱՊԵՏ Հ. ԳԱՐԵԳԻՆ Բ ՍՈՒՐԲ ԵՎ ՀԱՅՐԱՊԵՏ ԳԱՐԵԳԻՆ Բ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԱՄԱՐ ԿԱՅՑԱԾ ՀԱՆԴԵՍՈՒՄ